

Յուրուք Հայոց ընդդէմ դիւաց եւ այսոց

Swithune footed thrice the old,
A met the night-mare and her nine fold;
Bid her alight,
And her troth plight,
And aroint thee, witch, aroint thee!

— *King Lear*, Act III Scene 4

Յուրուք Ա¹

Աղօթք վասն թպղայի եւ ալի (FF)

Սուրբն Պետրոս եւ սուրբն Պօղոս եւ սուրբն Մինասսա եւ սուրբն Շեղաթ գնացին ճանապարհաւ եւ տեսին այր մի նստեալ 'ի վերայ աւազոյ եւ մագն նորա իբրեւ ձար ձիոյ եւ ըղունկն նորա պղնձի, աչք նորա ապակի, ատամունք նորա երկաթի եւ ժանիքն նորա որպէս վարազի խոզի, լինոյն այլակերպք քան զամենայն կենդանեաց եւ ատամունք յետոյ եւ պոկունքն առաջի, թաթ ոտիցն յետոյ եւ կրունկն առաջի: Հարցին ցնա սուրբքն եւ ասէն. — Զի՞նչ ես դու պեղծ դժնիկ կամ զի՞նչ գործոց գործակել ես դու կամ զի՞նչ է անունդ քո: Ստոյգ խոստովանեա մեզ: (FF)

Ասէ պեղծն. — Ես եմ մայրն ամենայն չարեաց, ես եմ ալն չար որ նստիմ 'ի վերայ տղացկանի, զաչսն խաւարեցուցանեմ, զականջն խլացուցանեմ, զմարմինն թմրեցուցանեմ, զղասապն² քարշեմ եւ խեղդեմ զմայրն եւ զմանուկն: Մեր կերակուրն մանր տղայոց միսն է եւ տղացկանի դասապն: Խեղդեմ ԶԷ ամսական տղայն յորովայնի մօր իւրոյ, զողանամք, խուլ եւ մունջ առնեմք եւ տանիմք առ թագաւորն մեր յանդունդս եւ նա մեծարէ զմեզ: Զտղայն 'ի յօրօրոցն խեղդեմք, զտղացկանն 'ի յանկողինն, զմանուկն 'ի տաշտին. Ռք հազարաց եմք եւ մեր թագաւորն սաթայ հելն է: Եւ ոչ թողումք որ տղայն 'ի փեսայութիւն մտանէ եւ ոչ աղջիկն 'ի հարսնութիւն: Եւ մեր քնակութիւնն յանկիւնս տանն է եւ յախոռն է եւ դրան ետեւն է եւ աղբրեզերն է. զանասունն եւ զամենայն չորքոտանիք ոչ թողումք որ աճին. զոմանս քամոտ առնեմք եւ զոմանս չըռաթափ: Ահա՛, ասացի զամենայն. ով սուրբքդ Աստուծոյ, մի՛ տանջեք զիս: (FF)

Յայնժամ հանին սուրբքն Աստուծոյ զսուրն հրեղենն և նոցա չարչարեին և ասէին. — Երդմնեցուցանեմք զքեզ, չար դեք, զՀայր և զՌդդին և զսուրբ Հոզին և միածին Աստուած կենդանին և ածեմ[ք] 'ի վերայ ձեր անողորմ հրեշտակքն քազում: (SH)

¹ In the corpus of Armenian prayer-incantations against demons and evil spirits, there are a number of similar narratives with varying amounts of detail regarding the appearance of the demons, their malevolent deeds, and the means by which they are controlled. In order to provide a more-complete representation of the narrative type involving the demons *al* and *t'pgha*, the text presented here combines portions of texts from the following sources: Feydit, F., *Amulettes de l'Arménie chrétienne [Amulets of Christian Armenia]*, Venice: St. Lazarus, 1986, pp. 306–312; and Harutyunyan, S., *Հայ հնաշխարհային եւ ժողովրդական աղոթքներ [Armenian Incantations and Folk Prayers]*, Yerevan: 2007, No. 1(159) դ, p. 131. The specific source (FF or SH) is noted after each paragraph. Text corrections in brackets are as indicated in these sources.

² Դասապ is glossed by Ghevont Alishan as լեարդ in his *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց [Ancient Faith or Pagan Armenian Religion]*, Venice: 1910. In another text of this incantation, the word ճիկար is used (Feydit: 308, n. 12).

Յուռուրթ Հայոց ընդդէմ դիւաց եւ այսոց

Եւ ասէ մայրն ալին. — Մի՛ չարչարէք զանդրանիկն իմ, զի մեք երդնուք 'ի ձեզ Աստուածն կենդանի և 'ի կաթն սուրբ կուսին Մարիամու, 'ի քնարն Դաւթի, Դավետարանչացն, ԻԴ մարգարէիցն, 'ի տախտակն Մովսէսի, 'ի բլենն Քրիստոսի, 'ի մատանին Սողոմոնի. յոր տուն սոքայ անուանքն լինի[ն] կամ յիշուի[ն] կամ գրած լինի[ն] անդ, ոչ մտանեմք 'ի յայն կին և զմանուկն ոչ զօղանամք և ոչ առնուք պակաս: Եւ անուանքն մեր այս են. յառաջինն Ծնելոց, Բ. Աղլագո, Գ. Մայրոյէ, Դ. Աղքատէ, Ե. Այսմէ, Զ. Այսզին, Է. Մարմարոյէ, Ը. Այրոյ, Թ. Կալիշի, Ժ. Յուլիցայ, ԺԱ. Եկիտուն, ԺԲ. Անկանես: Ուր այս բանքս լինի և անուանքն սրբոց լինի[ն]՝ հալածիմք 'ի սահմանաց դիւացն և փարատեմք զգաւս և բժշկեմք զգաւս ընդդէմ ծառայիս Աստուծոյ տիրացու Գրիգորին (*name*)³: (SH)

— Կապեմ զքեզ ալն չար 'ի մէջ աւագանին. կապեմ ['ի վերայ] խաչին, քաջ, որ ոչ 'ի մայրն մտանես եւ կորուսանես եւ ոչ 'ի տղան (*name*): Կապեմ զքեզ քաջ 'ի հայր եւ [յ]որդին եւ 'ի սուրբ հոգին: Հաւատամ 'ի Հայր, [յ]Որդին որ ընդ աջմէ Հօրն, Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկինս համբարձեալ սուրբ մարմնով: Գ խաչեր կանգու[ն]ք կային⁴. խաչեցին մէկն, զդուռն փակեցին. այն խաչն սուին էր 'ի մարտի. ան պահապան ծննդկանիս որ ոչ վնասի մինչ 'ի գալուստն Քրիստոսի: Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ծառայիս Աստուծոյ. Ամեն: (FF)

Յուռուրթ Բ⁵

Գիր դիւացհար մարդոյ վերայ, կարդայ կամ գրէ,
վերայ պահէ, լաւանայ Աստուծով

Ծառ մի կայր 'ի մէջ երկրի ոչ ճուղն ունէր և ոչ տերև և ոչ արմատ. արծիւ մի նստեալ էր 'ի վերայ նորա, որ ոչ գլուխ ունէր և ոչ թել և ոչ ոտք: Հարցուք եղեն յարծևին և ասէին. — Զի՛ նստեալ ես 'ի ծառոյդ, որ ոչ ճուղն ունի և ոչ տերև և ոչ արմատ:

Ասէ արծիւն այն դշիղն⁶. — Երթամ 'ի գլուխն մարդոյ, զմիսն որսեմ, զուղուղն ծրծեմ, զաչից լոյսն պակասացնեմ:

Լսեցին զայն հրեշտակք և հրեշտակապետք, հրամայեցին և ասեն. — Կապեալ կապեմք զքեզ երեք հարիւր և ԿԵ սրբովք, որք կան 'ի սիրտ արեգական, որ ոչ հրեշտակք գիտեն և ոչ հրեշտակապետք, բայց միայն հայր Աստուած:

Եւ դարձեալ ասեմ. — Կապեմ զքեզ 'ի քնարն Դաւթի, 'ի մատանին Սողոմոնի, 'ի տախտակն Մովսէսի, 'ի պատմուճանն Ահարօնի, 'ի դաստառակն Քրիստոսի, 'ի քաղցր կաթն սուրբ կուսին, 'ի չորեք բլենն Քրիստոսի, որ Տեառն արեամբ ներկեալ ես: Կալեմք կապեմք զքեզ կապանօքն Պօղոսի և Պետրոսի, պայծառակերպութեամբն Քրիստոսի, որ պայծառակերպեցաւ 'ի Թաբոր լերինն երեք սրբեացն լուսովն, որ երևեցաւ 'ի վերայ անմահ զագաթն Քրիստոսի: Չունիս իշխանութիւն, ոչ աճիս և ոչ

³ In prayer-incantations such as this, which are typically found in Armenian *hmayils*, spaces would be left open where the name(s) of the hmayil's owner was to be written.

⁴ Reading կար in the text as կայր, and correcting it to plural կային.

⁵ Harutyunyan: No. 1(143), pp. 117, 300.

⁶ Դշիղ – դժիւեմ, դժի, չարաբարո, ժանտ (Harutyunyan: 457).

Յուրուրթ Հայոց ընդդէմ դիւաց եւ այսոց

նիւթիս, և ոչ զօրանաս, իստանաս, այլ չորանաս և կորընչիս: Չիք ես, չիք դառնաս բանիւ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ծառայիս Աստուծոյ տիրացու Գրիգորին, (*name*) դիւահար մարդոյն:

— Կապեմ զքեզ ԻԴ մարգարէիւքն, երկոյտասան առաքելովքն, ՀԲ աշակերտովքն, 'ի փառքն Ադամայ՝ 'ի վայելչութիւնն դրախտին, խոտն, որ հովանի եղև, 'ի բանն, որ ասաց Յիսուս 'ի վերայ իսաչին՝ Էլի, Էլի, լամա սաքաքթանի: Կապեմ զքեզ 'ի պետութիւնքն և իշխանութիւնքն և 'ի բարձրեալ սերօբէքն և քերօբէքն: Կապեմ զքեզ, պիղծ դևք, 'ի իսաչին Քրիստոսի, զի նա է լուս և լուսատու տիեզերաց:

— Կապեմ զքեզ, ՅԿԶ ցաւ կամ ախտաժեռք, 'ի դիմաց որոյ ոչ այլ երևիս. եթէ կլիսիվայր ես, եթէ կլիսիվեր ես, եթէ գնա[յ]ուն ես, եթէ կերնի ես, եթէ առիքն ես, եթէ կետի առիւծ ես, եթէ կուլեկ ես, եթէ աղվիսուկ ես, եթէ ձերնուկ ես, եթէ խուլեկ ես, եթէ խլուրան ես, եթէ աչքունքն ես, եթէ մաչիկ ես, եթէ շուտիկ ես, եթէ կորտնիկ ես, եթէ սև բազուկ ես, եթէ խումհան ես, եթէ խոցունկ ես, եթէ անցաւ ես, որ մարկարկոլ⁷ ես, չիք ես եւ չիք դառնաս: Չգիրս ես կարդամ և դեղ Յիսուս Քրիստոս լինի ծառայիս Աստուծոյ տիրացու Գրիգորին (*name*):

— Կապեմ զքեզ, եթէ երկնային ես, եթէ երկրային ես, եթէ 'ի ծովու ես, եթէ ցամաքու ես, եթէ յարևելից ես, եթէ յարևմտից ես, եթէ յարաւային ես, եթէ յիւսիսային ես, եթէ դև ես, եթէ սատանայ ես, եթէ Բեեզդեբուդ ես, եթէ ալ ես, եթէ քաջք ես, կենդար⁸ ես, եթէ Նոփիադն ես, եթէ դասն ես, եթէ իշխան դիւաց ես, եթէ համր ես, եթէ խուլ ես:

— Կապեցի զքեզ իշխանութեամբն Հօր, տերութեամբն Որդոյ, զօրութեամբն սուրբ Հոգոյն, բարեխօսութեամբ սուրբ կուսին Մարիամայ և ամենայն սուրբ կուսանացն և աղօթիւք սուրբ հայրապետաց և ճգնաւորաց, եղեցի բժշկութիւն տիրացու Գրիգորին, (*name*) դիւահար մարդուն:

⁷ Մարկարկոլ – ինչ-որ հիվանդություն (Harutyunyan: 469).

⁸ Կենդար – հավանաբար՝ կենտավրոս, առասպելական կենդանի ձիու և մարդու մարմնով, մարդաձի (Harutyunyan: 465).